

Աջակցություն արդյունաբերական վթարների
ազդեցության գոտում գտնվող բնակչության իրազեկության
և պատրաստվածության բարձրացմանը

ՎԵՐՋՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Contacts		
 Bundesministerium für Umwelt, Naturschutz und Reaktorsicherheit, UBA, Z6, Wörlitzer Platz 1, 06844 Dessau Gerhard Winkelmann-Oei/Ülrike Tröger Tel.: +49.340.2103 2196 Fax: +49.340.2104 2196 E-mail: gerhard.winkelmann-oei@uba.de ulrike.troeger@uba.de	 Ministry of Nature Protection Republic of Armenia, Government Bldg. 3, 0010 Yerevan, Armenia Volodya Narimanyan Tel.: (+374 10) 54 08 94 Fax: (+374 10) 20 96 04 E-mail: narimanyan59@mail.ru	 JINJ Ltd., 38 Zeytun 2-nd Street, 0037 Yerevan, Armenia Eduard Mesropyan/Kristine Sahakyan Tel: (+374 10) 24 60 23 Fax: (+374 10) 20 96 04 E-mail: eduard_mesrpyan@jinjconsult.com kritine_sahakyan@jinjconsult.com

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
3. ՖԱԲՐԻԿԱՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
4. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

4.1. Ծրագրի մեկնարկային հանդիպում և համատեղ այցելություն արտադրական ձեռնարկություն

4.2. Ուսուցողական դասընթացներ արտադրական ձեռնարկության աշխատակիցների համար

4.3. Ուսուցողական դասընթացներ հասարակության համար

4.4. Ոլորտի օրենսդրական դաշտի ուսումնասիրություն

4.5. Տեղեկատվական թերթիկների պատրաստում և տարածում

4.6. Տեղեկատվական գրքույկի պատրաստում և տպագրում

4.7. Բաց ցուցադրական վարժանքի նախապատրաստում և իրականացում

4.8. Ծրագրի ամփոփիչ սեմինարի անցկացում

5. ՎԵՐՋԱԲԱՆ

Հաշվետվությանը կից ներկայացվում են.

- Տեղեկատվական թերթիկները (3 տեղեկատվական թերթիկ)
- Արդյունաբերական վթարների ազդեցության գոտում գտնվող բնակչության իրազեկության և պատրաստավածության բարձրացման ուղեցույցի 15 օրինակ
- Բաց ցուցադրական վարժանքը լուսաբանող տեսաֆիլմը՝ կոշտ սկավառակով
- Ծրագրի ամփոփիչ սեմինարի օրակարգն ու հրավիրվածների ցուցակը

ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ	ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ԶԻՆՋ ՍՊԸ, Երևան, Զեյթունի 2-րդ փողոց տուն 38	Z6-90 213-58/2
Ծրագրի անունը	
Աջակցություն արդյունաբերական վթարների ազդեցության գոտում գտնվող բնակչության իրազեկության և պատրաստվածության բարձրացմանը	
Ծրագրի իրականացման ժամկետ՝ 15.07.2008 – 31.10.2009	
Հաշվետու ժամանակաշրջան՝ 15.07.2008 - 31.10.2009	

Սույն ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի Բնության, Շրջակա Միջավայրի Պահպանության և Միջուկային Ռեակտորների Անվտանգության Ֆեդերատիվ Նախարարության կողմից:

Ծրագրի իրականացման ազգային համակարգողն է ՀՀ Բնապահպանության նախարարությունը: Ծրագիրն իրականացրել է ԶԻՆՋ ինժեներա-խորհրդատվական ընկերությունը:

Ծրագիրն իրականացվել է Հայաստանի Արագածոտնի մարզի Մելիքայուղ համայնքի տարածքում գործող ոսկու հանքավայրում:

ԶԻՆՋ ինժեներա-խորհրդատվական ընկերությունը շնորհակալություն է հայտնում ծրագրի աշխատանքներում ներգրավված բոլոր մասնակիցներին, որոնց մասնագիտական բարձր մակարդակը ապահովեցին ծրագրի հաջող իրականացումը:

1. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն ունենալով համեմատաբար փոքր տարածք, հարուստ է օգտակար հանածոներով: Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում 01.01.2007թ.-ի դրությամբ հաշվառված է պինդ օգտակար հանածոների հաստատված պաշարներով 579 հանքավայր: Օգտակար հանածոների արդյունահանման լրացուցիչ աղբյուր են հանդիսանում նաև պոչամբարները:

Արդյունաբերության տարբեր ճյուղերի վերականգնմանը զուգընթաց երկիրը առավել մեծ ուշադրություն է դարձնում բնապահպանական հարցերին և միջոցառումներ ձեռնարկում շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա դրանց բացասական ազդեցության նվազեցման ուղղությամբ:

Այդ նպատակով Հայաստանն ընդունել է մի շարք ազգային օրենքներ և վավերացրել միջազգային կոնվենցիաներ: 1996թ. Հայաստանի կողմից վավերացվել է ՄԱԿ-ի ԵՏՀ «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ազդեցության մասին» կոնվենցիան (Յելսինկի, 1992թ.), «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիան (Էսպո, 1991թ.):

Բացի այդ ընդունվել են մի շարք օրենսդրական փաստաթղթեր և կոնվենցիաներ, որոնք կարգավորում են հասարակության իրազեկության բարձրացման և որոշումների կայացմանը հասարակության մասնակցության հարցերը:

Սույն ծրագիրը ֆինանսավորվել է Գերմանիայի Բնության, Շրջակա Միջավայրի Պահպանության և Միջուկային Ռեակտորների Անվտանգության Ֆեդերատիվ Նախարարության կողմից և ուղղված էր հելսինկյան կոնվենցիայի դրույթների կատարմանը:

Այս ծրագրի նպատակն էր. աջակցել արտադրական ձեռնարկության ազդեցության գոտում գտնվող համայնքի ազդակիր բնակչության իրազեկության բարձրացմանը վթարային իրավիճակների դեպքում խուճապի չմատնվելու, արագ կողմնորոշվելու, ճիշտ գործելու և անվտանգության կանոնները պատշաճ ձևով իրականացնելու գործընթացներում:

Ծրագիրը միաժամանակ նպաստեց հասարակության և ձեռնարկության աշխատակիցների տեսական (դասընթացների անցկացում, տեղեկատվական գրքույկի պատրաստում) և փորձնական գիտելիքների (բաց ցուցադրական վարժանքի կազմակերպում) հարստացմանը, ինչը վթարային իրավիճակների դեպքում թույլ կտա հնարավորինս նվազեցնել մարդու և շրջակա միջավայրի վրա դրանց բացասական ազդեցությունը:

Ծրագրի կատարման տևողությունը 10 ամիս էր: Այն իրականացվել է «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ընկերության ենթակայության տակ գտնվող «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ում՝ որպես հիմնական օբյեկտ դիտարկելով գործարանի պոչամբարը:

«Գլոբալ Գոլդ Մայնինգ» ընկերությունը գործում է հանքարդյունաբերության ոլորտում և հիմնականում զբաղվում է ոսկու հանքերի ուսումնասիրությամբ և շահագործմամբ (մանրամասների համար այցելել կազմակերպության ինտերնետային էջ՝ www.globalgoldcorp.com):



Ծրագիրն իրականացվել է Ընկերության ղեկավարության համաձայնությամբ և աջակցությամբ: Նրանք կարևորել են նման ծրագրի իրականացումը, քանի որ այն կհարստացնի ձեռնարկության աշխատակազմի գիտելիքներն ու կնպաստի ընկերության տեխնիկական և ֆինանսական կայունության ապահովմանը:

Ծրագրի շրջանակներում անց են կացվել; ուսուցողական դասընթացներ՝ ձեռնարկություն աշխատակիցների, ինչպես նաև ձեռնարկության ազդեցության գոտու համայնքի ակտիվ բնակիչների համար:

Դասընթացները վարել են ինչպես գործարանի վթարային անձնակազմում ներգրավված, այնպես էլ իրավիրված փորձառու մասնագետները (արտակարգ իրավիճակների, բնապահպանության, հասարակության հետ կապերի, տեղական ինքնակառավարման մասնագետներ և այլն): Կազմակերպվել են հանդիպումներ ձեռնարկության ազդեցության ոլորտում գտնվող համայնքների բնակչության հետ: Նրանց համար պատրաստվել և բաժանվել է տեղեկատվական գրքույկ, որը պարունակում է վթարային իրավիճակները բնութագրող չափորոշիչների, արտակարգ իրավիճակներում հասարակության գործողությունների վերաբերյալ ինֆորմացիա: Գրքույկը հանդիսանում է փոքրիկ ուղեցույց հասկանալու համար, թե ինչ են իրենցից ներկայացնում արդյունաբերական վթարները և ինչպիսի հետևանքներ նրանք կարող են ունենալ:

Ստացած տեսական գիտելիքները լրացվել և ամրապնդվել են հասարակության համար բաց ցուցադրական վարժանքի անցկացմամբ:

Ծրագրի իրականացման համար կարևորվել է համագործակցությունը պետական մի շարք կառույցների հետ՝ ԱԻՎ-ն, Բնապահպանության, Առողջապահության նախարարություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ և շահագրգիռ պետական այլ կառույցներ: Հասարակության համար բաց ցուցադրական վարժանքը անց է կացվել վերոհիշյալ կառույցների և արտադրական ձեռնարկության վթարային խմբի մասնակցությամբ:

Հուսով ենք, որ ծրագրի հաջող իրականացումը կապահովի նրա շարունակականությունը՝ ընդգրկելով նոր ազգային և տարածաշրջանային արտադրական ձեռնարկություններ և կծնավորվի ավանդույթ նման միջոցառումների պարբերաբար կիրառման համար:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն

Տարածքը՝ 29,8 հազ. քառ. կմ

Հարևան պետությունները՝

- Վրաստան (հյուսիս)
- Ադրբեջան (արևելք)
- Իրան (հարավ)
- Թուրքիա (արևմուտք)

Բնակչությունը՝ 3.2 մլն. մարդ

Բնակչության խտությունը

127.6 մարդ/քառ. կմ

Մայրաքաղաքը՝ Երևան (1.2 մլն. բնակիչ)



Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Անդրկովկասի հարավում՝ մերձարևադարձային կլիմայական գոտու հյուսիսային եզրում և զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան ոչ մեծ հատվածը:

Հայաստանը տիպիկ լեռնային երկիր է, սարահարթերի, հարթավայրերի, գետահովիտների, գոգավորությունների բարդ համակցությամբ և ունի համեմատաբար չոր, ցամաքային կլիմա: Երկրի բնական համալիրը բնութագրվում է ռելիեֆի բարդությամբ, հողային, ջրային և անտառային ռեսուրսների սահմանափակությամբ, տարածքների մեծ մասի ինժեներակառուցական անբարենպաստ պայմաններով (բարձր սեյսմիկություն, գեոդինամիկ պրոցեսների առատություն): Միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1850 մ, իսկ տարածքի մոտ 40 % -ը գրեթե պիտանի չէ բնակեցման համար:

Հայաստանի տարածքը բաժանված է 11 մարզերի՝ ներառյալ մայրաքաղաք Երևանը (տես քարտեզը): Դեռևս ԽՍՀՄ տարիներին հանրապետության քաղաքներից և բնակավայրերից շատերը համարվում էին արդյունաբերական կենտրոններ, իսկ ներկայումս գործող հիմնական արդյունաբերական ճյուղերն են հանդիսանում՝

- Հանքարդյունաբերությունը (հանքահարստացում և լեռնարդյունահանում)
- Քիմիական արդյունաբերությունը
- Մետալուրգիան
- Մեքենաշինություն և մետաղամշակումը
- Թեթև արդյունաբերությունը
- Սննդի արդյունաբերությունը
- Շինարարությունը:

Սույն նախագծի իրականացման համար որպես մոդելային ձեռնարկություն ընտրվել է «Գլոբալ Գոլդ Մայնինգ» ընկերության ենթակայության տակ գտնվող «Մեգո Գոլդ» ՍՊԸ-ի Թուխմանուկի հարստացուցիչ ֆաբրիկան, որը գտնվում է Հայաստանի Արագածոտնի մարզում:

2007թ.-ին Արագածոտնի մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.3 %,
- գյուղատնտեսություն՝ 7.6 %,

- շինարարություն՝ 1.0 %,
- մանրածախ առևտուր 0.5 %,
- ծառայություններ՝ 0.5 %:

Մարզի տնտեսության հիմքը արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն են:

Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի և ըմպելիքի, թանկարժեք իրերի արտադրության ու հանքավայրերի շահագործման ուղղություններում: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Հարստացուցիչ ֆաբրիկան տեղակայված է Արագածոտնի մարզի Փամբակ-Ջանգեզուրի մետաղագոյակառուցվածքային գոտու սահմաններում, Գետիկ գետի վերին հոսանքի հովտում: Այն կապված է մայրաքաղաք Երևանի հետ 72 կմ երկարությամբ ասֆալտապատ ավտոճանապարհով:

Ձեռնարկությանն ամենամոտ քաղաքը Ապարան քաղաքն է, որն ունի շուրջ 7000 բնակիչ և գտնվում է նրանից մոտ 10 կմ հեռավորության վրա: Ֆաբրիկային հարակից գյուղը Մելիքգյուղ համայնքն է, որն ընկած է ֆաբրիկայից մոտ 3.6 կմ դեպի արևելք:

Մելիքգյուղ համայնքի մշտական բնակչությունը 2008թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 1318 մարդ: Գյուղի բնակիչության ընդամենը 6%-ն (80 մարդ) են աշխատում հարստացուցիչ ֆաբրիկայում:

➤ **ՏԵՂԱՆՔԻ ԿԼԻՄԱՆ**

Շրջանի կլիման բնութագրվում է որպես չափավոր-մայրցամաքային, իսկ 2000-ն բացարձակ միջերից վեր՝ ալպյան: Ձմեռը տևական է, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղներն ու ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Ֆաբրիկայի պոչամբարի տարածքում կլիման բարեխառն լեռնային է:

Տեղանքի կլիմայական բնութագրերը բերված են Այուսակ 1-ում՝ ըստ Ապարան քաղաքի օդերևութաբանական կայանի 30 տարվա դիտումների տվյալների: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը +33.0 °C է, իսկ բացարձակ նվազագույնը՝ -34.0 °C: Միջին հարաբերական խոնավությունն ամենացուրտ եղանակին 70% է, իսկ ամենաշոգ ժամանակ՝ 47%: Տեղումները հիմնականում լինում են մայիս-հունիս և սեպտեմբեր ամիսներին:

Այուսակ 1 - Տեղանքի կլիմայական բնութագրերը

Օդերևութաբանական տվյալներ	Ա Մ Ի Ս Ն Ե Ր												Տարեկան
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Միջին ամսական ջերմաստիճան, °C	-9.1	-7.7	-3.3	4.0	9.7	13.1	16.7	16.7	12.7	6.6	0.6	-5.8	4.5
Օդի միջին հարաբերական խոնավություն, %	78	76	74	69	66	64	63	60	61	66	74	77	69
Տեղումների միջին քանակը, մմ	42	44	61	78	92	92	75	54	43	49	48	43	721
Քամու միջ. արագությունը, մ/վրկ	2.1	2.3	2.4	2.4	2.4	2.3	2.3	2.3	2.2	2.1	2.0	1.9	2.2

➤ **ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**

Շրջանի ջրագրական ցանցը ներկայացված է Գետիկ գետով և նրա փոքր անանուն վտակներով:

Գետիկ գետը Քասախ գետի վտակներից է: Գետի սնուցումը խառն է՝ ձնա- անձրևային և ստորգետնյա ջրերով: Նշված աղբյուրներից գետի սնուցման մշտական ռեժիմ ունեն միայն ստորգետնյա ջրերը, այդ պատճառով գետի ռեժիմը տարվա ընթացքում զգալի փոփոխվում է: Առավելագույն դեբիտը դիտվում է գարնանը, իսկ նվազագույնը՝ ամռանը և ձմռանը: Գետիկ գետը հունվարից մինչև մայիս ծածկվում է սառցաշերտով:

2006թ. հունվարից “Մեգո-Գոլդ” ՍՊԸ կատարում է Գետիկ գետի ջրերի քանակական ու որակական ամենամսյա մոնիտորինգ:

➤ **ԲՈՒՍԱԿԱՆ և ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ**

Շրջանում տարածված են լեռնային սևահողերը, որոնք ձևավորվել են հրաբխային և հրաբխանստվածքային ապարների հողմնահարման արդյունքում: Տարածքի բուսական և կենդանական աշխարհի գնահատումը կատարվել է դաշտային ուսումնասիրությունների արդյունքների, գրականության տվյալների և ՀՀ ԳԱ Բուսաբանության ինստիտուտի նյութերի հիման վրա: Բիոտոպերը ներկայացված են տիպիկ լեռնային տափաստաններով:



Պոչամբարի տարածքը մոտ 2 հա մակերեսով դեգրադացված է, որը նախկինում անասունների անչափավոր գերարածեցման հետևանք է: Այդ մասին խոսում է նաև տվյալ տարածքում Տատասկ անատոլիականի (*Cirsium anatolicum*) լայն տարածումը:

Դիտարկվող տարածքում առկա կենդանիների տեսակները պատկանում են Հայաստանի տարածքում սովորական, լայնորեն տարածված, որոշ դեպքերում՝ ֆոնային տեսակների թվին: Տարածքում հայտնաբերված չեն ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ, ուստի պոչամբարի առկայությունը էապես չի անդրադառնում տարածաշրջանի ֆլորիստիկ և ֆաունիստիկ բազմազանության և առանձին տեսակների վրա:

3. ՖԱՐԻԿԱՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թուխմանուկի հարստացուցիչ ֆաբրիկայի արտադրողականությունը կազմում է 76500տ/տարի: Ֆաբրիկայի հանքավայրը մշակվում է բաց եղանակով: Հանքաքարը բացահանքից տեղափոխվում է ավտոինքնաթափերով և բեռնաթափվում բաց հրապարակում և այտային ջարդիչի սնուցիչով ընդունիչ բունկերում:

Հարստացուցիչ ֆաբրիկայում ոսկու կորզումը նախկինում իրականացվում էր գրավիտացիոն եղանակով: Սակայն միայն գրավիտացիոն եղանակով հարստացումը կիրառվում է հիմնականում ոսկի պարունակող ցրոնների համար, որտեղ գերիշխում է «ազատ» ոսկու պարունակությունը: Այս հանքաքարի դեպքում, երբ ոսկին ներկայացված է տարբեր տեսքով՝ բազալտե, սերտանված սուլֆիդալին և օքսիդացված միներալների հետ, նախընտրում են կոմբինացված հարստացման եղանակ, ինչը թույլ է տալիս զգալի ավելացնել ոսկու կորզումը և ավելի արդյունավետ շահագործել ընդերքը:

Սուլֆիդային միներալների պարունակությունը հանքաքարում տատանվում է 3-3,6% սահմաններում, իսկ սուլֆիդների հետ կապված (համաձայն ֆազային անալիզի) ոսկու տոկոսը՝ 32,8 կամ 1,9 գ/տ: Ազատ ոսկու պարունակությունը կազմում է 1,8 գ/տ կամ ընդհանուր պարունակության 31,0%, մնացած ոսկին այսպես կոչված «Ժանգոտ» ոսկին է (պատված երկաթի օքսիդի թաղանթով), որը կապված է դատարկ ապարի և օքսիդացված միներալների հետ և պրակտիկորեն եթակա չէ կորզման:

Համաձայն լաբորատոր հետազոտությունների, գրավիտացիոն եղանակը թույլ է տալիս կորզել միայն 18,6%, իսկ մնացած 81,38 % մնում են պոչերում, ինչը դարձնում է հանքի շահագործումը ոչ արդյունավետ:

Աղացների աշխատանքը դասակարգիչների հետ փակ ցիկլում, և ֆլոտացման տեխնոլոգիայի ներդրումը ֆաբրիկայում, թույլ տվեցին ավելացնել ոսկու կորզումը ևս 68,9%՝ հասցնելով ոսկու ընդհանուր կորզումը 87,5%:

Համաձայն նախագծով ընդունված սխեմայի, գրավիտացիայի պոչերն ուղղվում են հիմնական ֆլոտացման պրոցես, իսկ խտանյութը բնական չորացման: Հիմնական ֆլոտացման պոչերը տալիս են ստուգողական ֆլոտացիայի, իսկ խտանյութն անցնում է երկու փուլային մաքրում: Ստուգողական ֆլոտացման պոչերը հանդիսանում են վերջնական և ուղղվում են պոչամբար: Ստուգողական ֆլոտացման խտանյութը և առաջնային մաքրման փուլի միջանկյալ արգասիքը միանում են և վերադառնում հիմնական ֆլոտացման պրոցես: Երկրորդային փուլի միջանկյալ արգասիքը վերադառնում է առաջնային մաքրման փուլ, իսկ խտանյութը՝ II-6M2 մակնիշի խտացուցիչ: Խտացուցիչից խտացված խյուսը (պինդ մասի պարունակությունը 50-55%) տալիս են BOH10-1,8-1Y մակնիշի քամիչ, որի զտվածքը վերադառնում է խտացուցիչ: Քամված 12% խտանյութը պատրաստի արտադրանք է և կշռաբաշխումից հետո ուղղվում է սպառողին:



Խտացուցիչի պարզվածքը՝ միանալով ստուգողական ֆլոտացման պոչերին, տեղափոխվում է պոչամբար, որտեղ խյուսի պինդ մասի նստեցումը հետո, պարզված ջուրը վերադառնում է ֆաբրիկա՝ դեպի տեխնոլոգիական պրոցես:

Հարստացուցիչ ֆաբրիկան աշխատում է փակ շրջանառու համակարգով, ինչը բացառում է արտադրական կեղտաջրերի արտահոսքը բաց ջրավազաններ: Հանքահարստացման հիմնական սարքավորումների ցանկը բերված է աղյուսակ 2-ում, իսկ արտադրության տեխնոլոգիական սխեման՝ նկար 1-ում:

Աղյուսակ 2 - Նախագծով նախատեսված սարքավորումների ցանկը և քանակը

h/h	Գործողության անվանումը	Սարքավորումների մակնիշը	Ընդհանուր քանակը, հատ
1.	Դասակարգում	ГЦР-360	1
2.	Հիմնական ֆլուտացում	BF -2,8 (4-խցային)	1
3.	Ստուգողական ֆլուտացում	BF -2,8 (4-խցային)	1
4.	Մաքրման I-փուլ	BF -1,2 (4-խցային)	1
5.	Մաքրման II-փուլ	BF -1,2 (2-խցային)	1
6.	Խտացում	Ц-6М2	1
7.	Քամում	БОН10-1,8-1У	1


Ճշգրիտ դոզավորումը թույլ է տալիս խուսափել ռեագենտների գերաժախսից և նվազացնել ռեագենտների մնացորդային կոնցենտրացիաները արտադրական կեղտաջրերում:

Տեխնոլոգիական պրոցեսում օգտագործվող ռեագենտները և նրանց ծախսը բերված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3 - Օգտագործվող ռեագենտների տեսակը, նշանակությունը և ծախսը

	Ռեագենտի անվանումը	Նշանակությունը	Ակտիվություն %	Ինչ տեսակով են տալիս պրոցես	Ծախսը տ/տարի
1	Կիր	Միջավայրի կարգավորիչ	50	10%-ոց լուծույթ կրակաթի տեսքով	500,0
2	Բուտիլ-քսանտադենատ	Հավաքիչ	90	5 %-ոց լուծույթ	5,0-10,0
3	Ծծմբային նատրիում	Կարգավորիչ/դեպրեսոր (կախված ծախսից)	62	9 %-ոց լուծույթ	3,0-5,0
4	Տրանսֆորմատորի յուղ T-80	փրփրիչ	-	-	6,0-8,0

Նկար 1 - Հանքահարստացման ֆաբրիկայի տեխնոլոգիական սխեմա



ՊՈԶԱՄՔԱՐ

Ֆաբրիկայի պոչամբարը կառուցված է գետիկ գետի վերին հոսանքի հովտում, համեմատաբար հարթ տարածքում, Մելիքյուղ համայնքից 2 կմ հեռավորության, իսկ հարստացուցիչ ֆաբրիկայից 80-100մ հեռավորության վրա:

Պոչամբարի տակ հատկացված տարածքի ընդհանուր մակերեսը 2,0 հա է, որն իրենից ներկայացնում է 7% թեքությունով թեթև զառիվայր լանջ: Տեղանքի ռելիեֆը թույլ է տալիս այստեղ ունենալ կիսահարթային տիպի պոչամբար:



Պոչամբարը լցումային է՝ մինչև 2164.0մ: Պոչամբարի հավասարաչափ լցման նպատակով նրա ողջ երկայնքով մոնտաժված է խողովակաշար, որի յուրաքանչյուր 20-25մ վրա մոնտաժված են բաժանարարներ: Պոչամբարի լցումը կատարվում է հերթականությամբ՝ ըստ երկարության յուրաքանչյուր անգամ բացելով 2 կամ 3 բաժանարար: Առաջնային պատմեշի բարձրությունը կազմում 10մ, որի շնորհիվ

ստեղծված ծավալը թույլ է տալիս կուտակել մինչև 150 հազ. տոննա պոչեր (90 հազ. մ³): Պատմեշը և պոչամբարի հատակը ամբողջությամբ մեկուսացված են կավի շերտով, ինչը կանխում է պոչամբարից արտադրական ջրերի ներծծումը դեպի ստորգետնյա ջրեր:

Պատմեշի կավային էկրանի հաստությունը 3,0մ է, իսկ հատակինը՝ 1,0մ: Հետագայում նախատեսվում է պատմեշի բարձրացում տիղմալցային եղանակով ևս 2,5մ, ինչը թույլ կտա կուտակել լրացուցիչ 40 հազ. տոննա պոչեր:

Պոչամբարի սպասարկման համար պատմեշի գագաթին առկա է 3մ լայնությամբ ճանապարհ: Պոչերը ինքնահոս եղանակով պոչամբար են տեղափոխվում պողպատե խողովակով:

Պոչամբարի նախագիծը անցել է քաղաքաշինական ու բնապահպանական փորձաքննություն և ստացել դրական եզրակացություն:

Համաձայն հանքահարստացման ֆաբրիկայի տեխնոլոգիական սխեմայի, ֆաբրիկայում գոյություն ունեն հետևյալ հիմնական արտադրամասերը՝

- ջարդման տեղամաս,
- մանրեցման տեղամաս,
- հարստացման տեղամաս,
- թանձրացման տեղամաս,
- զտման տեղամաս,
- պոչամբար:

Հայաստանի Հանրապետությունում գործող Սեյսմակայուն Շինարարության նախագծման նորմերի ՀՀՇՆ II - 2.02-94 համաձայն, դիտարկվող տարածքը գտնվում է սեյսմիկ II-րդ գոտում (մինչև 9 բալ), որին համապատասխանող գրունտի հորիզոնական արագացման առավելագույն մեծությունը 300 սմ/վրկ² է, իսկ գրունտերի շարժման արագությունը՝ 24 սմ/վրկ:



➤ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Զեռնարկությունն ունի վթարների վերացման պլան, դրանց իրականացման սցենար, ինչպես նաև ապահովված շարժունակ անհրաժեշտ սարքավորումներով վարժված խումբ, որը կարող է վթարների դեպքում ցույց տալ առաջին անհրաժեշտ օգնությունը: Խումբն

ապահովված է նաև համապատասխան հաղորդակցման համակարգով (ինֆորմացիոն և շարժունակ կապ), որով կարողանում է կապվել ձեռնարկության վարչական կազմի, տեղական իքնակառավարման մարմինների և շտապ օգնության հետ:

Ֆաբրիկայի պոչատարը ինքնահոս է, երկարությունը 80-100մ, ինչը չափազանց փոքրացնում է վթարի հավանականությունը: Վթարի դեպքում պոչամբարը կատարում է վթարային ավազանի դեր:

Պոչամբարի պատնեշի կայունությունը որոշելու համար տեղադրված են պիեզոչափեր և հենանիշեր (ռեպեր)՝ պատնեշի նստվածքի չափը որոշելու համար:

Գրունտային ջրերի մոնիտորինգ կատարելու համար պոչամբարի պատնեշի մոտակայքում՝ տարբեր խորությունների վրա տեղադրված են պիեզոչափեր, որոնք թույլ են տալիս ժամանակին հայտնաբերել և արագ կանխել շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումները:

Պոչամբարի տարածքում շրջակա միջավայրի մոնիտորինգի ծրագիրը բերված է աղյուսակ 4-ում: Մոնիտորինգի տվյալները ներկայացվում են ամսական հաշվետվությունում:

Աղյուսակ 4 - Շրջակա միջավայրի մոնիտորինգ

Մոնիտորինգի օբյեկտ	Գործունեություն	Կիրառվող միջոցառումներ
<i>Մակերևութային ջրեր</i>	ընտրված կետերում կատարել Գետիկ գետի ջրերի մոնիտորինգ	գետի ջրերում աղտոտվածության հայտնաբերման դեպքում տեղեկացնել ղեկավարությանը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ
<i>Գրունտային ջրեր</i>	գրունտային ջրերի մոնիտորինգի իրականացում տեղադրված պիեզոչափերի միջոցով	գրունտային ջրերում աղտոտվածության հայտնաբերման դեպքում տեղեկացնել ղեկավարությանը և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ
<i>Ռեկուլտիվացիա</i>	պատնեշի ռեկուլտիվացիայի մոնիտորինգ, պոչամբարի կոնսերվացման ընթացքում ռեկուլտիվացիայի մոնիտորինգ	ռեկուլտիվացման միջոցառումների ոչ արդյունավետության հայտնաբերման դեպքում վերանայել ռեկուլտիվացիայի ծրագիրը
<i>Ջրամատակարարում</i>	օգտագործվող թարմ և շրջանառու ջրերի մոնիտորինգ	եթե տեղի է ունենում ջրի գերածախս, որը կարող է բերել չնախատեսված արտահոսքերի, անհրաժեշտ է կարգավորել տեխնոլոգիական պրոցեսը
<i>Պոչամբարի շահագործում</i>	պոչամբարի տարածքի շրջակա միջավայրի մոնիտորինգ՝ ներառյալ պոչատարի հսկողությունը	եթե հայտնաբերվեն պոչամբարի և պոչատարի շահագործման տեխնիկական պայմանների խախտումներ, ապա պոչամբարի և պոչատարի հետագա շահագործումը պետք է դադարեցվի այնքան ժամանակով, որքան կպահանջվի այդ թերությունները վերացնելու համար

4. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

➤ 4.1 Ծրագրի մեկնարկային հանդիպում և համատեղ այցելություն արտադրական ձեռնարկություն

Ծրագրի մեկնարկային հանդիպումը տեղի է ունեցել 2008թ. սեպտեմբերի 11-ին, Կովկասի տարածաշրջանային էկոլոգիական կենտրոնի երևանյան գրասենյակում: Հանդիպմանը մասնակցել են ներկայացուցիչներ ՀՀ Բնապահպանության, Առողջապահության նախարարություններից, Գերմանիայի Բնության, Շրջակա Միջավայրի Պահպանության և Միջուկային Ռեակտորների Անվտանգության Ֆեդերատիվ նախարարությունից, միջազգային կազմակերպություններից (OSCE, UNDP), հասարակական և մասնավոր սեկտորից, ինչպես նաև ծրագրով ընտրված արտադրական ձեռնարկությունից և նրա ազդեցության տարածքում գտնվող բնակավայրի տեղական ինքնակառավարման մարմիններից:



Հանդիպման շրջանակներում մասնակիցներին ներկայացվել են ծրագրով նախատեսված աշխատանքների մանրամասները և մինչև հանդիպումն իրականացված աշխատանքները: Ծրագրի իրականացման գաղափարը ողջունվել է մասնակիցների կողմից և գնահատվել կարևոր ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի համար:

Ծրագրի հետագա իրականացման համար հանդիպման ժամանակ առանձնացվել է 2 հիմնական խնդիր.

- ծրագրի իրականացման կարևորությունը Հայաստանի համար,
- ծրագրի միջազգային նշանակությունը ֆինանսավորող կողմի համար:



«Գլոբալ Գոլդ Մայնինգ» ընկերությունը և նրա ենթակայության տակ գտնվող «Մեզո Գոլդ» ՍՊԸ-ն, որի տարածքում իրականացվում էր ծրագրի, այս հանդիպման ժամանակ հայտնեցին ծրագրի իրականացման աշխատանքներում իրենց աջակցության մասին:

Գերմանական կողմը ծրագրի հետագա աշխատանքների շարքում կարևորեց ոլորտում առկա օրենսդրական դաշտի վերլուծության և վթարային իրավիճակների դեպքում բնակչության

համար նախատեսված միջազգային մոդելային ուղեցույցի մշակման գործընթացները: ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակը ևս հայտնեց իր պատրաստակամությունը ծրագրի աշխատանքներում աջակցություն ցուցաբերելու գործում:

ՀՀ ԲՆ Ջրային Ռեսուրսների Կառավարման Գործակալությունը հնարավոր համարեց ծրագրի արդյունքները հետագայում ջրավազանային կառավարման պլաններում ընդգրկելը:

Այս հանդիպումը թույլ տվեց պետական, մասնավոր և հասարակական սեկտորների ներկայացուցիչներին փոխանակել ունեցած տեղեկատվությունն ու գաղափարները, քննարկել ծրագրով նախատեսված աշխատանքները, տալ իրենց դիտողություններն ու

առաջարկությունները հետագա գործողությունների վերաբերյալ, ինչն իր էական դրական ազդեցությունը կունենա ծրագրով նախատեսված աշխատանքների արդյունավետ իրականացման գործում:

Ծրագրում ներգրավված մասնագետների և Գերմանիայի Բնապահպանության նախարարության ներկայացուցիչների հետ համատեղ իրականացվել է այց արտադրական ձեռնարկություն, որտեղ խմբին միացել են նաև ձեռնակության ներկայացուցիչները:

Մասնակիցները այցի ընթացքում կարողացան տեղում ծանոթանալ աշխատանքային պայմանների հետ, ձեռնարկության ղեկավարության և աշխատակիցների կողմից մանրամասն բացատրվեց և ցույց տրվեց արտադրության տեխնոլոգիան և սարքավորումները:



Համատեղ խմբով ուղևորվություն կատարվեց դեպի հանքեր, որտեղ խումբն ականատես եղավ իրականացվող պայթեցման աշխատանքներին, դեպի գործարան հանքաքարի տեղափոխման և տեխնոլոգիական գործընթացում նրա կիրառման գործընթացներին (ջարդում, աղացում, դասակարգում, գրավիտացիա, ֆլոտացիա, խտացում, քանում, պոչեր, պոչամբար):

Այցելություն է կատարվել նաև գործարանի լաբորատորիա, որտեղ մասնակիցները հնարավորություն են ունեցել ծանոթանալ իրականացվող լաբորատոր գործընթացների և սարքավորումների հետ:

➤ **4.2 Ուսուցողական դասընթացներ արտադրական ձեռնարկության աշխատակիցների համար**

Ծրագրի շրջանակներում արտադրական ձեռնարկության աշխատակիցների, ինչպես նաև ազդակիր համայնքի բնակչության հետ անց են կացվել ուսուցողական դասընթացներ:

Գործարանի աշխատակիցների համար ուսուցողական սեմինարների ժամանակ համապատասխան մասնագետների կողմից (բնապահպանության, արտակարգ իրավիճակների, առողջապահության, արտադրական օբյեկտների անվտանգության, տեղական ինքնակառավարման մասնագետներ, ինչպես նաև մասնագետներ գործարանից) ներկայացվել են հետևյալ թեմաները.

1 սեմինարի թեմաներ

1. Ձեռնարկության տեխնոլոգիական գործընթացի նկարագրությունը և նրա առավել վթարավտանգ հանգույցները (մասնագետ ձեռնարկությունից)
2. Արտադրական վթարները և նրանց բացասական հետևանքները: Միջազգային փորձն այս ոլորտում (արտադրական անվտանգության փորձագետ)
3. Վթարների ռիսկի հավանականությունը



արդյունաբերական վտանգավոր օբյեկտներում: Վթարների պատճառները և նրանց հետևանքները շրջակա միջավայրի վրա: Վթարների հետևանքների վերացում (արտակարգ իրավիճակների մասնագետ):

II սեմինարի թեմաներ

1. Պոչամբարների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և դրա հետ կապված հիմնախնդիրները (բնապահպանության մասնագետ)
2. Վթարների պատճառով դեպի շրջակա միջավայր տեղի ունեցած արտահոսքերի (թունավոր ռեագենտներ, արտադրական կեղտաջրեր, նավթամթերքների և այլ վտանգավոր նյութեր) դեպքում ձեռնարկվող անհրաժեշտ միջոցառումները (առողջապահության և բնապահպանության մասնագետներ)
3. Ձեռնարկության շարժական հակավթարային խմբի ստեղծման անհրաժեշտությունը և նրա գործողությունները վթարների դեպքում: Վթարային իրավիճակների դեպքում տեղեկատվության տրամադրման և իրազեկման կարգը (արտակարգ իրավիճակների մասնագետ)
4. Արտադրական ձեռնարկություններում ստուգիչ թերթիկների կիրառման մեթոդոլոգիա (արտ. օբյեկտների անվտանգ. փորձագետ)



III սեմինարի թեմաներ

1. Արտակարգ իրավիճակների դեպքում ոլորտի օրենսդրական կարգավորումը: Աշխատակիցների պատրաստվածության բարձրացման և անվտանգության կանոնների պահպանման անհրաժեշտությունը (արտակարգ իրավիճակների մասնագետ)
2. Աշխատանքային անվտանգություն: Ոլորտի օրենսդրական կարգավորումը: Արտակարգ իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերում (առողջապահության մասնագետ)
3. “ՏԻՄ-եր-Ձեռնարկություն-Հասարակություն” կապի ամրապնդման անհրաժեշտությունն ու համագործակցության եզրերը (տեղական ինքնակառավարման մասնագետ):



ՀՀ Բնապահպանության նախարարության Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության առաջարկով գործարանի աշխատողների և Մելիքյուղի բնակչության համար կազմակերպվել է լրացուցիչ սեմինար, որտեղ Գործակալության աշխատակիցները ներկայացրել են «Արտակարգ իրավիճակների դեպքում շրջակա միջավայրի

պահպանությանն ուղղված միջոցառումները» և այդ ոլորտը կարգավորող օրենսդրությունը:

Գործարանում անցկացվող դասընթացների մասնակիցների ընտրության և խմբի ձևավորման գործում մեծապես աջակցել է ձեռնարկության ղեկավարությունը: Դասընթացներին մասնակցել են գործարանի առաջատար մասնագետները՝ ձեռնարկության կառավարիչ, փոխկառավարիչ, ֆաբրիկայի պետ, արտադրության ավագ վարպետ, երկրաբան, մեխանիկ, հերթափոխի պետ, մեխանիզատոր, փականագործ, նմուշների պահեստապետ, վերահսկիչ և այլն:

➤ 4.3 Ուսուցողական դասընթացներ հասարակության համար

Ծրագրի շրջանակներում հասարակության հետ տարվող աշխատանքներում ներգրավվել է «Ազգային Ջրային Համագործակցություն» հասարակական կազմակերպությունը (ԱՋՀ ՀԿ), որն ունի հարուստ փորձ հասարակության իրազեկության մակարդակի բարձրացման և որոշումների ընդունման ժամանակ հասարակության ներգրավման գործընթացներում:

Հասարակության հետ տարված աշխատանքներն իրականացվել են ԱՋՀ ՀԿ-ի կողմից, որին նաև աջակցել է Մելիքյուղի գյուղապետարանը և Ապարանի բնապահպանական տեղեկատվական կենտրոնը (Օրիուս կենտրոն): Հասարակության անդամներից կազմված խմբի ձևավորման նպատակով ԱՋՀ ՀԿ-ի կողմից իրականացվել են այցելություններ գյուղական համայնք և պատրաստված հարցաթերթիկի միջոցով պարզաբանվել գյուղացիների շահագրգռվածությունը ծրագրով նախատեսված աշխատանքներին մասնակցելու և ձեռնարկության գործունեության վերաբերյալ ունեցած տեղեկատվության վերաբերյալ:

Հասարակության համար նախատեսված ուսուցողական սեմինարների ժամանակ համապատասխան մասնագետների կողմից ներկայացվել են հետևյալ թեմաները.

I սեմինարի թեմաներ

1. ՏԻՄ-երի, ձեռնարկության աշխատակիցների, ազդակիր համայնքի բնակչության գործողությունները արտակարգ իրավիճակների դեպքում (արտ. իրավիճակների մասնագետ)
2. Առողջապահական հարցեր, համապատասխան գերատեսչության գործողություններն ու պատասխանատվությունը արտակարգ իրավիճակների դեպքում (առողջ. մասնագետ)
3. Հասարակության իրազեկության մակարդակի բարձրացում և մասնակցություն որոշումների ընդունման գործընթացին՝ Օրիուսի կոնվենցիա (հաս. իրազեկ. փորձագետ)

II սեմինարի թեմաներ

1. Ձեռնարկության տեխնոլոգիական գործընթացի նկարագրությունը և նրա առավել վթարավտանգ հանգույցները (մասնագետ ձեռնարկությունից)



2. Պոչամբարների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և դրա հետ կապված հիմնախնդիրները (բնապահպանության մասնագետ)
3. Հասարակության պատրաստության բարձրացում և անվտանգության կանոնների պահպանում: Բնակչության գործելակերպը արդյունաբերական վտանգավոր օբյեկտների վթարների դեպքում (արտակարգ իրավիճակների մասնագետ)
4. Ֆիզիկական աղտոտիչների ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա և դրա հետ կապված առողջապահական խնդիրները (բնապահպանության, առողջապահության մասնագետ)

III սեմինարի թեմաներ

1. Բնության օգտագործման և պահպանության տնտեսագիտական հիմունքներ (բնապահպանության մասնագետ)
2. Վթարային իրավիճակների դեպքում հասարակությանը տեղեկատվության տրամադրման և իրազեկման կարգը (արտակարգ իրավիճակների մասնագետ)
3. “ՏԻՄ-եր-Ձեռնարկություն-Հասարակություն” կապի ամրապնդման անհրաժեշտությունն ու համագործակցության եզրերը (տեղական ինքնակառավարման մասնագետ):



➤ 4.4 Ոլորտի օրենսդրական դաշտի ուսումնասիրություն

Ուսուցողական դասընթացների անցկացմանը զուգընթաց իրականացվել է նաև ոլորտի օրենսդրական դաշտի ուսումնասիրություն: Կազմվել է առողջապահական, բնապահպանական և արտակարգ իրավիճակներին առնչվող իրավական փաստաթղթերի ցանկը (օրենքներ, ենթաօրենսդրական ակտեր, նորմատիվային, նորմատիվատեխնիկական փաստաթղթեր, հրահանգներ, կանոններ), որոնցից առավել կարևորագույնների վերաբերյալ տեղեկատվությունը ներառվել է ծրագրի շրջանակներում պատրաստված և տպագրված գրքույկում:

Ուսումնասիրվել են նաև արտադրական ձեռնարկության անվտանգության ոլորտում առկա փաստաթղթերը.

- պայթեցման անվտանգության կանոններ,
- երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգության կանոններ,
- բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների, հանքավայրերի անվտանգ շահագործման կանոններ,
- անվտանգության հրահանգներ ըստ կադրերի,
- մեխանիզատորների անվտանգության տեխնիկայի հրահանգներ,
- աշխատակիցների անվտանգության տեխնիկայի, աշխատանքի պաշտպանության և արտադրական սանիտարիայի հրահանգավորման մատյան,
- արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության փորձաքննության եզրակացություն,
- շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության եզրակացություն ֆարիկայի պոչամբարի նախագծի վերաբերյալ:

Ֆաբրիկայի անվտանգության ոլորտում առկա փաստաթղթերի ուսումնասիրությունը բացահայտեց, որ ֆաբրիկան չունի կառավարական մարմինների կողմից հաստատված պոչամբարի անվտանգության վկայագիր, ինչն էլ նաև բացակայում էր արտակարգ իրավիճակների դեպքում ներքին և արտաքին տեղեկատվության տրամադրման կարգը: Այդ ուղղությամբ ձեռնարկության ղեկավար մարմիններին համապատասխան մասնագետների կողմից տրվել են խորհրդատվություններ, և գործարանի կողմից ստացվել է դրական արձագանք, որ հնարավորինս սեղմ ժամկետներում այդ փաստաթղթերը կմշակվեն:

➤ 4.5 Տեղեկատվական թերթիկների պատրաստում և տարածում

Հասարակությանը ծրագրի և նրա հետագա քայլերի մասին տեղեկացնելու նպատակով պարբերաբար պատրաստվել են տեղեկատվական թերթիկներ, որոնք ծրագրի իրականացման տարբեր ժամանակահատվածներում տարածվել են համայնքի բնակչության և գործարանի աշխատակիցների շրջանում: Ծրագրի շրջանակներում պատրաստվել են 3 տեղեկատվական թերթիկներ, որոնցից.

- **առաջինը** ծրագրի նպատակների, խնդիրների և ծրագրով նախատեսված գործողությունների վերաբերյալ էր: Նրանում ներառված տեղեկատվությունը ներկայացվել է 2 տարբերակով՝ հայերեն-անգլերեն և ռուսերեն-անգլերեն լեզուներով: Այն տարածվել է հասարակության շրջանում ծրագրի սկզբում՝ մինչ ծրագրի հիմնական գործողությունները սկսվել:
- **երկրորդը** տարածվել է ուսուցողական դասընթացների ավարտին՝ 2008թ. աշնանը: Այն վերաբերում էր մինչ այդ իրականացված գործողություններին (ուսուցողական դասընթացների անցկացում բնակչության և գործարանի աշխատակիցների համար) և ծրագրի հետագա քայլերին:
- **երրորդ** տեղեկատվական թերթիկը բաժանվել է համայնքում մինչև բաց ուսուցողական վարժանքի անցկացումը: Այստեղ ներկայացված տեղեկատվությունը հիմնականում վարժանքի անհրաժեշտության, նրա անցկացման ստույգ ժամկետների և մասնակիցների վերաբերյալ էր:

Տեղեկատվական թերթիկները բերված են հավելված 1-ում:



➤ **4.6 Արդյունաբերական վթարների ազդեցության գոտու բնակչության իրազեկության և պատրաստվածության բարձրացման ուղեցույցի պատրաստում և տպագրում**

Ծրագրի շրջանակներում պատրաստվել է եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ուղեցույց, որը նպատակ ուներ բարձրացնել արդյունաբերական օբյեկտների ազդեցության գոտում գտնվող բնակչության, ինչպես նաև ձեռնարկությունների աշխատակիցների իրազեկության մակարդակը՝ վթարային իրավիճակների դեպքում արագ կողմնորոշվելու, ճիշտ գործելու, անվտանգության կանոնները պատշաճ ձևով պահպանելու գործընթացներում՝ նպաստելով բնակչության և ձեռնարկության աշխատակիցների գիտելիքների հարստացմանն այս ոլորտում: Ուղեցույցը նախատեսված է տարբեր շահագրգիռ մարմինների և հասարակության լայն խավերի համար: Այն նախատեսվում է կիրառել ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային մակարդակով:

Գրքույկի նախնական տարբերակը, նրա կառուցվածքն ու բովանդակությունը քննարկվել են շահագրգիռ բոլոր կողմերի հետ՝ ՀՀ Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների և Առողջապահության նախարարությունների համապատասխան բաժիններում: Ստացված առաջարկների համապատասխան այն լրամշակվել է և նորից ուղարկվել վերոնշյալ նախարարություններ՝ վերջնական համաձայնություն ստանալու նպատակով:

Այն կազմված է հետևյալ բաժիններից.

1. Արդյունաբերական վթարներ
2. Բնակչության պաշտպանվածությունն ու վարքն արտակարգ իրավիճակներում
3. Շրջակա միջավայրի պահպանությունն արտակարգ իրավիճակներում
4. Ուսումնական վարժանքներ
5. Ոլորտի օրենսդրական կարգավորում:

Ուղեցույցի առաջին բաժինը տեղեկատվություն է պարունակում արդյունաբերական վթարի սահմանման, արտակարգ իրավիճակների դասակարգման վերաբերյալ: Այս բաժնում բերված են նաև վերջին ժամանակներս Հայաստանում տեղի ունեցած արդյունաբերական վթարների օրինակներ:

Երկրորդ բաժինը ներառում է բնակչության վարվելակերպի կանոնների, բնակչության պաշտպանության կազմակերպման և պաշտպանության ձևերի մասին տեղեկատվություն, ինչպես նաև մանրամասնում է վթարային իրավիճակներում տեղեկատվության տրամադրման և իրազեկման կարգը:

Արտակարգ իրավիճակներում շրջակա միջավայրի պահպանության բաժինը վերաբերում է վթարի կանխարգելման նախապատրաստական և վթարի սպառնալիքի կամ առաջացման դեպքում իրականացվող անհապաղ միջոցառումներին:

Գրքույկում պարզաբանվում է նաև թե ինչ են իրենցից ներկայացնում ուսումնական վարժանքները և ինչպես են դրանք դասակարգվում:

Ուղեցույցի վերջին բաժինն անդրադառնում է ոլորտին վերաբերող մի շարք ազգային և միջազգային իրավական փաստաթղթերին՝ ընդունված Հայաստանի կողմից:

Ուղեցույցի վերջում նշված են նաև որոշ օգտակար ինտերնետային հղումներ, որոնք հնարավորություն են տալիս հասարակության տարբեր խավերին (մասնագետներ և ոչ մասնագետներ) ստանալ հավելյալ տեղեկատվություն տարաբնույթ արտակարգ իրավիճակների, դրանց կանխարգելման և հետևանքների նվազեցման ուղիների, մարդկանց վարքի կանոնների, ոլորտի իրավական դաշտի, հասարակական լսումների իրականացման և

որոշումների ընդունման գործընթացներում հասարակության մասնակցության, ինչպես նաև այս ոլորտում եվրոպական փորձի վերաբերյալ:

Մինչ ծրագրով նախատեսված ուսումնական վարժանքի անցակացումը, ուղեցույցի փորձնական տարբերակը տպվել և բաժանվել է համայնքի բնակիչներին, որպեսզի վարժանքի ժամանակ նրանք ավելի լավ պատկերացում կազմեն իրականացվող միջոցառման վերաբերյալ:

Եռալեզու ուղեցույցի վերջնական տարբերակը տպագրվել է 100 տպաքանակով: Այն ներկայացվել ու բաժանվել է շահագրգիռ կողմերին՝ ծրագրի ամփոփիչ սեմինարի ժամանակ:

Գրքույկի 15 օրինակ կցվում է հաշվետվությանը:

➤ **4.7 Բաց ցուցադրական վարժանքի նախապատրաստում և իրականացում**

Ձեռնարկության աշխատակիցների ստացված գիտելիքների ամրապնդման, հասարակության իրազեկության բարձրացման և վթարային իրավիճակներն առավել ռեալ պատկերացնելու նպատակով, ծրագրի շրջանակներում կազմակերպվել է հասարակության համար բաց ցուցադրական վարժանք:

Այդ նպատակով ՋԻՆՋ ընկերությունը բանակցություններ է վարել ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության հետ՝ համապատասխան սցենարների մշակման և վարժանքի անցկացման վերաբերյալ: Ըստ երկուստեք համաձայնության, Փրկարար ծառայությունը մշակել է համապատասխան սցենարներ, որոնք համաձայնեցվել է ՀՀ Բնապահպանության նախարարության, գործարանի ղեկավարության և Պատվիրատուի հետ:



Վարժանքի իրականացման համար կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, որոնք ներառել են.

- վարժանքի իրականացման համապատասխան սցենարների մշակում և ընտրություն,
- վերջինիս համաձայնեցում գործարանի ղեկավարության հետ,
- միջոցառման անցկացման համար բոլոր պատասխանատու կողմերից թույլտվության ստացում,
- վարժանքի կազմակերպման համար անհրաժեշտ իրերի, սարքավորումների գնում,
- վարժանքի իրականացման համար միջոցառմանը մասնակից կողմերի հետ նախօրոք պայմանավորվածության ձեռք բերում:

Թեև ծրագրով նախատեսված էր վարժանքն անցկացնել 2009թ. ապրիլ ամսին, սակայն այն անց է կացվել հունիսին, ինչը պայմանավորված էր նրանով, որ.

- ֆաբրիկայում իրականացվում էին շինարարական աշխատանքներ,
- ծրագրում ներգրավված արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացուցիչները զբաղված էին իրենց վերապատրաստման դասընթացներով:

Չամաձայն նախօրոք մշակված սցենարների, սույն թվականի հունիսի 25-ին անցկացվել է հասարակության համար բաց ցուցադրական վարժանք՝ Արտակարգ իրավիճակների նախարարության (հրշեջներ, փրկարարներ և այլն), բնապահպանական, առողջապահական (մարզային հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության, շտապ օգնություն) կառույցների, ոստիկանության, գործարանի վթարային անձնակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմամբ:

Ցուցադրական վարժանքի ժամանակ կիրառվել են հետևյալ 2 սցենարները՝

1. *Մարզային փրկարարական վարչությունը ահազանգ է ստացվում ֆաբրիկայի պոչամբարում տեղի ունեցած վթարի մասին, ըստ որի պոչամբարի հողային պատմեշի ճեղքի հետևանքով տեղի է ունեցել ցիանաիդի վթարային արտահոսք մոտակա գետի հունով:* Ահազանգը ստանալուն պես մարզային փրկարարական վարչությունը կազմակերպում է՝

- վթարի վայրում հատուկ հետախուզություն և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում,
- համայնքի բնակչության իրազեկում տեղի ունեցած պատահարի և նման դեպքում հասարակության վարքի կանոնների վերաբերյալ,
- ոստիկանության բաժանմունքի ուժերով՝ տարահանված բնակչության տների և ունեցվածքի պահպանություն, համայնքում հասարակական կարգի պահպանում,
- մարզային հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության կողմից գետի ջրի մոնիթինգ և լաբորատոր հետազոտության ուղարկում:



2. *Մարզային փրկարարական վարչության դիսպետչերական կետ ահազանգ է ստացվում, որ հարստացուցիչ ֆաբրիկայի քիմիական նյութեր տեղափոխող բեռնատար ավտոմեքենան վթարի է ենթարկվել համայնքի կենտրոնական մասում: Մեքենայից վառելիքի արտահոսքի հետևանքով հրդեհ է բռնկվել ավտոմեքենայում և հարակից բնակելի տանը, կան տուժածներ:* Վթարի հետևանքները վերացվում են հրշեջ-փրկարարական ջոկատի, շտապ օգնության և գործարանի վթարային խմբի ուժերով:



Կատարվել է վարժանքի տեսագրություն, որի որոշ դրվագներ ս.թ. հունիսի 29-ին արդեն ցուցադրվել են հեռուստատեսությամբ “Արտակարգ ալիք” հաղորդման ժամանակ, որը հեռարձակվում է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության հովանավորությամբ:

Իրականացվել են տեսագրության մոնտաժման, CD/տեսաերիզի պատրաստման և բազմացման ուղղությամբ աշխատանքներ: Բաց ցուցադրական վարժանքի վերաբերյալ նկարահանված ֆիլմի տևողությունը կազմում է 10 րոպե: Ֆիլմի CD/տեսաերիզը կցվում է սույն հաշվետվությանը:

➤ 4.8 Ծրագրի ամփոփիչ սեմինարի անցկացում

Ծրագրի արդյունքների վերլուծության և քննարկման նպատակով 2009թ. օգոստոսի 19-ին կազմակերպվել է ամփոփիչ սեմինար շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Հանդիպմանը մասնակցել են ներկայացուցիչներ ՀՀ Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների, Առողջապահության նախարարություններից, միջազգային կազմակերպություններից (OSCE, UNDP), հասարակական ու մասնավոր սեկտորից, ինչպես նաև ծրագրով ընտրված Գլոբալ Գուլդ Մայնինգ ընկերությունից, Թուխ Մանուկ ոսկու հարստացման գործարանից և նրա ազդեցության ոլորտում գտնվող Մելիքյուղ համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններից ու բնակիչներից: Սեմինարի օրակարգն ու մասնակիցների ցուցակը կցվում է:



Սեմինարի մասնակիցներին ծրագրի նպատակներն ու առաջադրանքները, ինչպես նաև ծրագրի շրջանակներում իրականացված ուսուցողական դասընթացների արդյունքներն ու բացահայտված կարիքները ներկայացրեց ծրագրի ղեկավար Քրիստինե Սահակյանը:

Ծրագրի փորձագետ Արևիկ Հովսեփյանը ներկայացրեց ծրագրի շրջանակներում Մելիքյուղ ազդակիր համայնքի բնակչության հետ տարված աշխատանքները, համայնքում իրականացված սոցիալական հարցումների արդյունքները: Ըստ այդ արդյունքների, գյուղի բնակչության մոտ 45%-ը դժգոհ էր գործարանի առկայությունից: Բնակչության դժգոհության հիմնական պատճառներից էին.

- ❖ Գործարանի գործունեության (հատկապես տեխնոլոգիական պրոցեսների) վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,
- ❖ Շրջակա միջավայրի որակի վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը,
- ❖ Ջրային ռեսուրսների աղտոտումը (հատկապես ոռոգման ջրի),
- ❖ Գործարանի և բնակչության միջև շփման ու փոխադարձ վստահության բացակայությունը,



Փորձագետը առաջարկեց նաև բնակիչների դժգոհության մեղմացման միջոցառումներ.

- ❖ Գյուղապետարանի և գործարանի միջև փոխշահավետ համագործակցության ստեղծում,
- ❖ Գործարանի տնօրինության, գյուղի ակտիվ բնակիչների և գյուղապետարանի աշխատա-

կիցների միջև հանդիպումների պարբերաբար կազմակերպում,

- ❖ Գործարանի, Լեռնամետալուրգիական ինստիտուտի, ինչես նաև բնապահպանական տեսչության կողմից իրականացվող շրջակա միջավայրի մոնիտորինգի տվյալների տրամադրում գյուղապետարան և գյուղի բնակիչներին,
- ❖ Շրջակա միջավայրի անկախ, հասարակական մոնիտորինգի պարբերաբար իրականացում և տվյալների տրամադրում բնակիչներին,
- ❖ Գյուղացիների առողջական վիճակի ուսումնասիրություններ՝ բացահայտելու համար գործարանի ազդեցությունը նրանց առողջության վրա,
- ❖ Գործարանի և գյուղապետարանի միջև համաձայնության ձեռք բերում ոռոգման սեզոնին գետի ջուրը մաքուր պահելու վերաբերյալ,
- ❖ Գյուղի բնակիչների համար ցուցադրական այց դեպի գործարան, արտադրական պրոցեսի հետ ծանոթացում,
- ❖ Արտակարգ իրավիճակներում աղեքվատ գործելու նպատակով գյուղի բնակչության հմտությունների զարգացում:

ՀՀ ԱՆ-ի փորձագետ Սոս Զովհաննիսյանը նշեց, որ ծրագիրը ցուցադրական էր նաև կառավարման մարմինների համար: Մեկիքգյուղի համայնքը յուրահատուկ է նրանով, որ նա գտնվում է այլ ազդեցությունների գոտուց դուրս և գործարանի ազդեցությունը միակն է: Այդ առումով հեշտությամբ կարելի է բացահայտել գործարանի ազդեցությունը թե շրջակա միջավայրի, թե մարդկանց առողջության վրա:

Փորձագետը նշեց, որ ծրագիրը հասել է իր նպատակին, այն կազմակերպված էր գերազանց: Եվ քանի որ Հայաստանում արդյունաբերական ձեռնարկությունների՝ հատկապես հանքարդյունաբերության զարգացման միտում է գրանցված, ապա խրախուսելի կլինեն նմանատիպ ծրագիր իրականացնել նաև այլ արտադրական ձեռնարկությունների համար և առաջարկեց Ազարակ քաղաքը, որտեղ լայն զարգացում է ստանում պղնձի արդյունահանումը: Նա առաջարկեց նաև ծրագիրը զարգացնել այլ ուղղությամբ՝ Մեկիքգյուղ համայնքում իրականացնել բնակչության առողջապահական հարցերի ուսումնասիրություն՝ բացահայտելու համար գործարանի ռեալ ազդեցությունը մարդկանց առողջության վրա:

ՀՀ ԱԻՆ Հայաստանի փրկարար ծառայության (ՀՓԾ) փորձագետ Կարեն Զովհաննիսյանը ներկայացրեց ուսումնական վարժանքների նպատակը, դրանց կարևորությունը: Նա նշեց, որ նմանատիպ վարժանքներ պետք է անց կացնել պարբերաբար և այլ համայնքներում ևս:

ՀՀ ԱԻՆ ՀՓԾ գնդապետ, ուսումնական վարժանքի ղեկավար Շամիր Շամիրյանը նշեց, որ ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնական վարժանքը գնահատվել է «լավ»։ Նա նշեց նաև որոշ բացեր, այն որ գործարանը դեռևս չունեն կառավարական մարմինների



կողմից հաստատված պոչամբարի անվտանգության վկայագիր, որ անհամապատասխանություններ կան նաև օրենսդրության մեջ՝ ըստ ՀՀ Քաղաքացիական պաշտպանության օրենքի համայնքի ղեկավարը հանդիսանում է քաղաքացիական պաշտպանության պետը, սակայն Տեղական ինքնակառավարման մասին օրենքում՝ համայնքի ղեկավարն ընդամենը աջակցում է քաղաքացիական պաշտպանությանը:

Պարոն Շամիրյանն առաջարկեց.

- ❖ աջակցել առկա օրենսդրական անհամապատասխանությունների վերացմանը,
- ❖ քանի որ Հայաստանում գործում են 23 քիմիական օբյեկտներ և կան 12 խոշոր վկայագրված պոչամբարներ, ապա նմանատիպ ծրագրեր իրականացնել նաև այլ օբյեկտներում ևս,
- ❖ նույն համայնքում շարունակել ու խորացնել ուսուցման և ուսումնական վարժանքի գործընթացը:

ՀՀ ԲՆ ՁՈԿ գարծակալության ներկայացուցիչ Էդգար Փիրումյանը ներկայացրեց ոլորտի օրենսդրական դաշտը, իսկ Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարման վարչության աշխատակից Իրինա Հակոբյանը ծրագիրը գնահատեց որպես միջազգային կոնվենցիաների դրույթների իրականացման օժանդակություն Հայաստանում:

Թուխ Սանուկ գործարանի ներկայացուցիչ Ալեքսանդր Բրուտյանը բարձր գնահատեց ծրագիրը և շնորհակալություն հայտնեց ծրագիրն իրականացնողներին, ովքեր իրենց ջանքերը չխնայեցին գործարանի և Մելիգյուղ համայնքի միջև բարիդրացիական հարաբերություններ ստեղծելու գործում: Նա նշեց, որ գործարանի ղեկավարությունը արդեն իսկ սեփական նախաձեռնությամբ հանդիպում է կազմակերպել գյուղի բնակիչների հետ, նախատեսում է կազմակերպել դպրոցականների էքսկուրսիա դեպի գործարան, որտեղ նրանք կժամկետային արտադրական գործընթացին: Սա իր հերթին կօժանդակի դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը:

Նա նշեց նաև, որ գործարանի անվտանգության վկայագիրը արդեն պատրաստ է և ներկայացվել է կառավարման մարմիններին՝ հաստատման:

Կարևորելով ծրագիրը թե գործարանի և թե համայնքի համար, պարոն Բրուտյանը նշեց, որ անհրաժեշտ է ապահովել ծրագրի շարունակականությունը և այդ նպատակով, ֆինանսական հնարավորության դեպքում, ձեռնարկությունն ինքը կֆինանսավորի նմանատիպ ծրագիր:

Ծրագրի իրականացման վերաբերյալ իր գոհունակությունը հայտնեց նաև Մելիքգյուղի համայնքապետ Սիեր Մխիթարյանը: Նա նշեց, որ ծրագիրը մեծ նշանակություն ունի գյուղի համար, ինչի արդյունքում նորմալ հարաբերություններ են ստեղծվել գործարանի ղեկավարության հետ, գործարանն արդեն իսկ գյուղին է տրամադրել շրջակա միջավայրի մոնիտորինգի արդյունքները, համատեղ ծրագրեր են մշակվում գյուղի բնակիչների, դպրոցականների համար: Նա շնորհակալություն հայտնեց ինչպես ծրագիրը ֆինանսավորող, այնպես էլ իրականացնող կազմակերպություններին, ծրագրի բոլոր փորձագետներին, ծրագիրը բարձր մակարդակով անցկացնելու համար:

Հանդիպման ժամանակ Արմեն Չիլինգարյանը ներկայացրեց UNDP-ի կողմից իրականացվող «Աղետներին պատրաստվածության և ռիսկերի նվազեցման ազգային կարողությունների հզորացում» ծրագիրը և տեղեկատվություն տվեց ծրագրի իրականացման վերաբերյալ: Ծրագիրն իրականացվում է Արարատի մարզում և վերաբերում է աղետներին և նրանց կանխարգելմանն ուղղված փորձին: Այն նախատեսվում է ավարտել 2009-ի վերջին:

Որպես ծրագիրն իրականացնող ՋԻՆՋ ՍՊԸ տնօրեն Էդուարդ Մեսրոպյանն իր խորին շնորհակալությունը հայտնեց ծրագիրը ֆինանսավորող Գերմանիայի Բնության, Շրջակա Միջավայրի Պահպանության և Միջուկային Ռեակտորների Անվտանգության Ֆեդերատիվ Նախարարությանը և հատկապես պարոն Գերհարդ Վինկելման-Օեին, ծրագիրը համակարգող ՀՀ Բնապահպանության նախարարության աշխատակիցներին, գործարանի տնօրինությանը, Մելիքյուղ համայնքի ղեկավարությանն ու բնակչությանը, ՀՀ Առողջապահության ու Արտակարգ իրավիճակների նախարարությունների աշխատակիցներին, Ապարանի Օրիուս կենտրոնին, հասարակական կազմակերպություններին, ծրագրի բոլոր փորձագետներին՝ ծրագիրը բարձր մակարդակով իրականացմանն օժանդակելու համար:

ՀՀ ԲՆ ՋՈԿԳ պետի տեղակալ Վլադիմիր Նարիմանյանը ևս շնորհակալություն հայտնեց Գերմանիայի Բնության, Շրջակա Միջավայրի Պահպանության և Միջուկային Ռեակտորների Անվտանգության Ֆեդերատիվ Նախարարությանը ծրագիրը ֆինանսավորելու, իսկ ՋԻՆՋ ՍՊԸ-ին՝ ծրագրի իրականացումը բարձր մակարդակով կազմակերպելու համար:

Նա նշեց, որ ներկայումս Հայաստանի ջրավազանների համար մշակվում են ջրավազանային կառավարման պլաններ: Այդ պլանները պետք է պարունակեն նաև վթարային իրավիճակներում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը կանխելու, նվազեցնելու և հետևանքները վերացնելու պլան ժամանակացույց:

Որպես ծրագրի շարունակություն պարոն Նարիմանյանն առաջարկեց մշակել նոր ծրագիր՝ «Վթարային իրավիճակներում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը կանխելու, նվազեցնելու և հետևանքները վերացնելու պլան ժամանակացույցի կազմման մեթոդաբանության մշակում» և ներկայացում համապատասխան դոնորներ կազմակերպություններին՝ ֆինանսավորման նպատակով:

Ամփոփելով սեմինարը նա գտավ, որ ծրագիրը հասել է իր նպատակին և կատարել է իր առջև դրված բոլոր խնդիրները:

Հանդիպումն անցավ ներկաների ակտիվ մասնակցությամբ՝ հարցեր, քննարկումներ, առաջարկություններ, մտքերի փոխանակում: Ծրագրի իրականացման փաստը ողջունվեց մասնակիցների կողմից՝ գնահատվելով կարևոր ու բարձր ինչպես Հայաստանի, այնպես էլ տարածաշրջանի համար:

Սեմինարի արդյունքներն ամփոփելով մասնակիցներն առաջարկեցին ծրագիրը շարունակել հետևյալ ուղղություններով.

1. Ուսումնասիրել ու վերլուծել ոլորտի ազգային ու միջազգային օրենսդրությունը, վեր հանել գործող օրենքների անհամապատասխանությունները, հանդես գալ օրենսդրական փոփոխությունների առաջարկով,

2. Ընդլայնել ծրագրի իրականացման մասշտաբները և նմանատիպ ծրագրեր իրականացնել նաև ՀՀ տարածքում գործող այլ արտադրական ձեռնարկություններում,
3. Նույն գործարանի և ազդակիր համայնքի տարածքում շարունակել ծրագիրը՝ ընդգրկելով ավելի շատ մասնակիցներ և համայնքից (դպրոցականներ, ուսուցիչներ, կանայք և այլն) և արտադրական ձեռնարկությունից, կազմակերպել ավելի ընդլայնված ուսուցողական դասընթացներ:
4. Նոր ծրագիրն իրականացնել Արտակարգ իրավիճակների նախարարության ներգրավմամբ՝ առավել ուշադրություն դարձնելով ուսումնավարժանքների անցկացմանը՝ ազդակիր համայնքների բնակիչների ներգրավմամբ:
5. Օժանդակել ծրագրի բոլոր շահառուների (Բնապահպանության, Արտակարգ իրավիճակների, Առողջապահության նախարարություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական ու մասնավոր սեկտոր և այլն) մասնագետների արտադրական վթարների ժամանակ գործելու ուսուցմանը, վերապատրաստմանն ու փորձի փոխանակմանը, ինչպես նաև հանդերձանքով և անհրաժեշտ գործիքներով հագեցվածության բարձրացմանը:

5. ՎԵՐՋԱԲԱՆ

Թեև հասարակության իրազեկության և որոշումների ընդունման գործընթացներում նրա մասնակցության իրավունքն ամրագրված է Օրինակի կոնվենցիայում, որը Հայաստանը վավարացրել է 2001թ., սակայն մինչ օրս կան զգալի թերություններ/թերացումներ այս ուղղությամբ, որոնք աստիճանական լուծման կարիք ունեն:

Այս ծրագիրը հանդիսանում է Գերմանիայի բնության, շրջակա միջավայրի պահպանության և միջուկային ռեակտորների անվտանգության ֆեդերատիվ նախարարության աջակցությամբ Հայաստանում իրականացված երկրորդ ծրագիրը: «Անդրսահմանային համագործակցություն Քուռ գետի ավազանում վթարային իրավիճակների նախազգուշացման նպատակով» ծրագիրն առաջինն էր, որն իրականացվել է Հարավային Կովկասում (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) 2003-2006թթ.: Ծրագրի նպատակն էր արդյունաբերական վթարներից և նրանց անդրսահմանային ազդեցությունից խուսափելու նպատակով ստեղծել տեղեկատվության արագ փոխանցման համակարգ, որի ընթացքում կատարվել են ընտրված արտադրական ձեռնարկությունների վթարավտանգավորության աստիճանի որոշում և տրվել համապատասխան բարելավման առաջարկություններ: Սակայն ծրագրի շրջանակներում չեն ներառվել աշխատանքներ արտադրական ձեռնարկությունների ազդեցությունների գոտիներում բնակվող հասարակության հետ:

Սույն ծրագիրը՝ հանդիսանալով վերջինիս տրամաբանական շարունակությունը, հնարավորություն տվեց բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը (վթարային/արտակարգ իրավիճակների դեպքում մարդկանց ճիշտ կողմնորոշում, մարդկային կորուստների հնարավորինս նվազագույն մակարդակի ապահովում և այլն) և իր հերթին աջակցեց ու բարձրացրեց Հարավային Կովկասի տարածաշրջանում իրականացված ծրագրի արդյունավետությունը:

Հուսով եմք, որ.

- ծրագրի իրականացումը հիմք կհանդիսանա հետագայում հասարակության համար բաց ցուցադրական վարժանքների պարբերական իրականացման համար,
- կբարձրացնի ձեռնարկության ազդեցության ոլորտի բնակչության իրազեկության մակարդակը և կարողությունը՝ վթարային իրավիճակներում գործել առանց խուճապի մատնվելու,
- կստեղծի փոխադարձ վստահություն և համագործակցություն արտադրական ձեռնարկությունների, հասարակության և պետական կառույցների միջև,
- կխթանի վթարային իրավիճակների դեպքում ձեռնարկության աշխատակազմի արագ կողմնորոշվելուն և անհրաժեշտ գործողությունների ճիշտ կատարմանը,
- կնպաստի վթարների դեպքում շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա ունեցած բացասական ազդեցության նվազեցմանը,
- կապահովի գործընթացի շարունակականությունը՝ ընդլայնելով մասշտաբները և ընդգրկելով նոր ազգային և տարածաշրջանային արտադրական ձեռնարկություններ:

Գործարանում, թե նրանից դուրս մարդու պաշտպանվածության հիմնական գրավականը իրազեկված լինելն է:

ՈՎ ԻՐԱԶԵԿՎԱԾ Է, ՆԱ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ Է...